



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. փետրվարին /վերլուծություն/

2007թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9699 գործարքներ, որոնց քանակը 2006թ. փետրվարի համեմատ նվազել է 2.0%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ աճել՝ 14.6%-ով:

2007թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4113 օտարման գործարքների 88.4% կազմել են առուվաճառքները, 10.9%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 31.2%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.2% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. փետրվարին, 2007թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 6.5%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ՝ 29.6%-ով:

2007թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 73.2% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 53.9%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ՝ 24.6%-ով:

2007թ. փետրվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2006թ.	փետրվար 2007թ.	հունվար 2007թ.
Կենտրոն	358200	415200	415200
Արաբկիր	276800	324000	324000
Քանաքեռ-Զեյթուն	168800	231700	226900
Նոր-Նորք	158400	205700	199500
Ավան	140400	191100	186600
Էրեբունի	138200	204200	204200
Շենգավիթ	171500	215200	214600
Դավթաշեն	174400	227400	222700
Աջափնյակ	159800	204300	198000
Մալաթիա-Սեբաստիա	155700	193700	189200
Նուբարաշեն	99000	117600	117600
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	181900	230000	227100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. փետրվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. հունվարի համեմատ աճել են 1.3%:

2007թ. փետրվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 469 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. հունվարի համեմատ աճել է 18.7%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ՝ 21.5%-ով:

2007թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2006թ.	փետրվար 2007թ.	հունվար 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	53200	90800	88000
	Ապարան	24200	28500	28000
	Թալին	23300	32400	32000
Արարատ	Արտաշատ	42200	71200	69000

	Մասիս	53000	80800	78306
	Վեդի	36100	53200	52000
	Արարատ	38500	52100	51000
Արմավիր	Վաղարշապատ	76200	112400	109000
	Արմավիր	47000	79100	77000
	Մեծամոր	29900	51100	50000
Գեղարքունիք	Սևան	32400	52100	51000
	Գավառ	23500	31600	31000
	Մարտունի	36900	46300	46000
	Վարդենիս	19300	25000	25000
	Ճամբարակ	10700	14200	13900
Լոռի	Վանաձոր	43300	64500	62100
	Ստեփանավան	22900	31900	31500
	Սպիտակ	26800	42300	42300
	Ալավերդի	19100	23300	23300
	Տաշիր	19800	22600	22000
	Թումանյան	5200	5400	5400
	Շամլուղ	2700	3000	3000
	Ախթալա	10300	11100	10900
Կոտայք	Աբովյան	82300	128200	126048
	Նոր Հաճն	57800	89100	86000
	Բյուրեղավան	38800	61500	60000
	Եղվարդ	52100	80000	80000
	Հրազդան	34100	44900	44000
	Ծաղկաձոր	63900	80600	80600
	Չարենցավան	37500	52400	52000
Շիրակ	Գյումրի	45100	60600	60166
	Արթիկ	26300	40900	40000
	Մարտիկ	21600	24100	23800
Սյունիք	Գորիս	47400	62400	61300
	Կապան	37300	57400	56500
	Սիսիան	29900	48300	47400
	Մեղրի	24500	35600	35300
	Ագարակ	18500	23000	23000
	Քաջարան	22700	29700	29700
	Դաստակերտ	6300	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	30800	54000	54000
	Եղեգնաձոր	47500	63400	63400
	Ջերմուկ	54900	93600	92000
Տավուշ	Դիլիջան	36900	59200	58000
	Իջևան	45900	77000	77000
	Բերդ	26200	33000	33000
	Նոյեմբերյան	14600	26500	26000
	Այրում	18000	18000	18000

2007թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. հունվարի համեմատ աճել են 1.7%:

2007թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 456 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 72, մյուս մարզերում միասին վերցրած՝ 384: 2007թ. հունվարի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 13.7%-ով, ընդ որում Երևանում՝ 1.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 16.4%-ով: 2006թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը աճել է 14.0%-ով, ընդ որում Երևանում նվազել է 6.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 18.9%-ով:

2007թ. փետրվարին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2006թ.	փետրվար 2007թ.	հունվար 2007թ.
Կենտրոն	364900	423800	417000
Արաբկիր	287700	337500	334100
Քանաքեռ-Զեյթուն	171900	235900	232600
Նորք-Մարաշ	184000	209500	203100
Ավան	144800	194500	188700
Էրեբունի	142500	207400	206000
Շենգավիթ	174200	218600	216200
Դավթաշեն	177500	230700	224500
Աջափնյակ	162400	207300	200500
Մալաթիա-Սեբաստիա	158800	196400	191400
Նուբարաշեն	101900	120500	120500
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	188200	234700	230400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. փետրվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. հունվարի համեմատ աճել են 1.9 % :

2007թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2006թ.	փետրվար 2007թ.	հունվար 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	54100	93100	89800
	Ապարան	25600	30500	29700
	Թալին	24200	34600	33600
Արարատ	Արտաշատ	43300	73300	71000
	Մասիս	53800	85100	82400
	Վեդի	37100	56600	54800
	Արարատ	39400	54700	53700
Արմավիր	Վաղարշապատ	77500	115900	111400
	Արմավիր	48300	81800	79400
Գեղարքունիք	Սևան	38100	54500	52700
	Գավառ	24500	33800	33000
	Մարտունի	38500	49400	48100
	Վարդենիս	21500	28700	27900

	Ճամբարակ	12600	16200	15900
Լոռի	Վանաձոր	44300	67300	65000
	Ստեփանավան	26700	35200	34200
	Սպիտակ	28600	45600	44300
	Ալավերդի	20300	25700	25300
	Տաշիր	21400	24400	23900
	Թումանյան	6800	7500	7300
	Շամլուղ	4300	4800	4800
	Ախթալա	11900	12800	12800
Կոտայք	Աբովյան	84000	133900	128900
	Նոր Հաճն	59200	92000	88500
	Բյուրեղավան	39800	64400	62300
	Եղվարդ	52800	84700	82700
	Հրազդան	35800	47500	46200
	Ծաղկաձոր	65100	93200	87000
	Չարենցավան	38300	55100	54100
Շիրակ	Գյումրի	47000	64300	62300
	Արթիկ	27500	43200	42000
	Մարալիկ	23400	26300	25900
Սյունիք	Գորիս	48700	65600	63500
	Կապան	37900	60900	59100
	Սիսիան	30900	50600	49600
	Մեղրի	25300	38100	37500
	Ագարակ	19900	25400	25000
	Դաստակերտ	8600	9000	9000
Վայոց Ձոր	Վայք	32800	57700	55900
	Եղեգնաձոր	48400	67300	65700
	Ջերմուկ	33000	44400	42900
Տավուշ	Դիլիջան	37600	61800	60300
	Իջևան	47000	80800	79000
	Բերդ	27100	35400	34900
	Նոյեմբերյան	15500	28000	27800
	Այրում	19200	19200	19200

2007թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. հունվարի համեմետ աճել են 3.0%:

Ընդհանուր առմամբ, 2007թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 1689 միավոր /1596.23 հա/ հողեր, որից Երևանում՝ 79 միավոր /8.63 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 49 միավոր /4.69 հա/ հողեր, որից Երևանում՝ 14 միավոր /1.09 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 837 միավոր /1461.07 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.35 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 521 միավոր /49.36 հա/, որից Երևանում՝ 52 միավոր /5.44 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 304 միավոր /79.28 հա/, որից Երևանում՝ 19 միավոր /2.33 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 19 միավոր /4.02 հա/, որից Երևանում՝ 3 միավոր, /0.52 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր 2 միավոր /2.00 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 6 միավոր /0.50 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. փետրվարին հանրապետությունում օտարված 1689 միավոր /1596.23 հա/ հողերից 1592 միավորի /1555.43 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 71 միավոր /7.58 հա/, նվիրատվության գործարքներ՝ 92 միավորի /40.09 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.90 հա/ և փոխանակության գործարքներ՝ 5 միավորի /0.71 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.15 հա/:

Հանրապետությունում 2007թ. փետրվարին, 2006թ. փետրվարի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 52.5%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 52.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 61.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 58.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 741.83 հա, որից 736.10 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 37.9% կամ 603 գործարքներ /553.84 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 18 գործարքներ /2.05 հա/, իսկ 62.1% կամ 989 միավորը /1001.59 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 53 միավոր /5.53 հա/:

Ստորև ներկայացվում է 2007թ. փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	3	0.52	6	0.57	9	0.96	4	0.20	0	0.00	39	3.96	10	1.37
Արագածոտն	25	101.97	1	0.90	0	0.00	15	0.60	82	40.44	0	0.00	32	3.37	1	0.01
Արարատ	18	7.89	7	1.49	37	3.29	38	1.47	128	66.43	1	0.20	66	6.51	2	0.26
Արմավիր	30	162.16	2	0.11	2	0.14	14	0.20	94	573.94	0	0.00	51	5.02	4	0.26
Գեղարքունիք	23	24.21	1	0.18	3	0.17	52	1.63	45	47.87	0	0.00	15	1.76	1	0.01
Լոռի	0	0.00	0	0.00	1	0.03	23	0.59	28	15.69	0	0.00	9	1.03	0	0.00
Կոտայք	29	48.90	0	0.00	26	3.54	51	2.32	155	153.66	0	0.00	110	10.12	10	3.44
Շիրակ	3	1.78	0	0.00	31	1.13	11	0.34	14	18.78	0	0.00	4	0.45	1	0.01
Սյունիք	3	10.80	0	0.00	0	0.00	13	0.63	6	12.34	0	0.00	0	0.00	1	0.03
Վայոց Ձոր	25	103.12	0	0.00	4	0.16	30	62.23	12	11.73	0	0.00	4	0.50	2	0.14
Տավուշ	19	3.59	2	0.57	25	1.68	14	2.48	48	20.04	1	0.05	7	0.90	1	0.10
Ընդամենը	175	464.42	16	3.77	135	10.71	270	73.45	616	961.12	2	0.25	337	33.62	33	5.63

Ստորև ներկայացվում է 2007թ. փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված

հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէկոլոգիայի համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	10	1.31	3	0.52	2	0.15	5	0.64	8	0.74	0	0.00	0	0.00	4	0.42	4	0.32
Արագածոտն	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	40	103.47	25	101.97	1	0.90	0	0.00	14	0.60
Արարատ	3	0.24	0	0.00	0	0.00	3	0.24	97	13.90	18	7.89	7	1.49	37	3.29	35	1.23
Արմավիր	4	0.01	0	0.00	0	0.00	4	0.01	42	162.39	28	161.95	2	0.11	2	0.14	10	0.19
Գեղարքունիք	2	1.21	1	0.18	0	0.00	1	1.03	77	24.98	23	24.21	0	0.00	3	0.17	51	0.60
Լոռի	4	0.02	0	0.00	0	0.00	4	0.02	20	0.60	0	0.00	0	0.00	1	0.03	19	0.57
Կոտայք	8	1.45	0	0.00	4	1.43	4	0.02	98	53.30	29	48.90	0	0.00	22	2.10	47	2.30
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	45	3.25	3	1.78	0	0.00	31	1.13	11	0.34
Սյունիք	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	15	11.42	3	10.80	0	0.00	0	0.00	12	0.62
Վայոց Ձոր	3	0.70	0	0.00	0	0.00	3	0.70	56	164.81	25	103.12	0	0.00	4	0.16	27	61.53
Տավուշ	14	0.84	2	0.57	2	0.05	10	0.22	46	7.48	19	3.59	0	0.00	23	1.63	4	2.26
Ընդամենը	50	5.79	6	1.27	8	1.63	36	2.89	544	546.34	173	464.21	10	2.50	127	9.07	234	70.56

Հանրապետությունում 2007թ. փետրվարին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարքներ /0.21 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. փետրվարին 2006թ. փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.5 անգամ: Ընդ որում Երևանում աճել է 14.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 2.5 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 58.7 %-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 53.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 10.6 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 25.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. փետրվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	25	101.97	34.4	1421.0	234.1	58	24.80	362.2	6772.5	2460.2
Ապարան						4	1.79	90.6	767.6	358.2
Թալին						20	13.86	90.6	758.5	356.7
Ծաղկահովիտ								77.0	948.2	164.2
Արարատի մարզ										

Արտաշատ	2	1.12	1733.3	2676.0	2204.7	44	28.92	335.1	5418.0	1332.5
Մասիս	14	6.24	32.0	1676.0	661.4	14	5.22	181.1	6772.5	1715.4
Վեդի	2	0.53	212.9	3057.6	1635.2	67	32.09	203.8	4515.0	1128.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						22	14.10	294.3	4063.5	851.1
Բաղրամյան	9	48.80	33.8	622.1	109.2	24	537.15	90.6	677.3	538.1
Վաղարշապատ	19	113.15	31.5	545.9	80.6	44	19.05	443.7	9030.0	1427.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	12	12.31	232.4	233.4	233.1	38	36.47	190.2	496.7	352.4
Ճամբարակ								45.3	541.8	143.2
Մարտունի						1	0.22	45.3	1806.0	462.3
Սևան								45.3	451.5	188.3
Վարդենիս	11	11.90	184.2	495.0	232.2	6	11.19	27.2	532.8	232.8
Լոռու մարզ										
Ալավերդի						10	5.72	163.0	2483.3	1000.0
Գուգարք								226.4	2709.0	902.9
Սպիտակ								226.4	1490.0	498.1
Ստեփանավան						6	5.80	90.6	2257.5	352.3
Տաշիր						12	4.17	45.3	451.5	197.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	14	12.62	69.5	1145.0	519.8	36	25.23	271.7	11287.5	3101.8
Եղվարդ	7	24.39	40.1	8010.0	1284.7	92	68.87	172.1	11287.5	2182.3
Հրազդան	8	11.89	142.5	209.0	169.0	25	59.08	113.2	2709.0	842.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.50	142.0	142.0	142.0	4	4.67	249.0	1693.1	434.4
Ամասիա								36.2	237.0	106.6
Անի						3	3.17	108.7	361.2	222.2
Աշոցք						6	9.68	45.3	112.9	114.3
Արթիկ	2	0.28	300.0	420.0	360.0	1	1.26	63.4	1083.6	164.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	9.88	90.6	673.3	330.2
Կապան	2	10.60	514.5	626.5	570.5	1	0.14	54.3	841.6	220.1
Մեղրի	1	0.20	1000.0	1000.0	1000.0	2	0.64	181.1	1784.2	443.4
Միսիան						1	1.69	45.3	631.2	214.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	11	69.92	39.0	635.0	210.8	12	11.73	117.7	2524.8	1254.7
Վայք	14	33.20	19.9	215.6	92.5			54.3	1430.7	492.3
Տավուշի մարզ										
Բերդ						9	1.83	45.3	841.6	342.3
Իջևան	17	2.84	440.2	800.0	778.8	2	0.42	240.0	1683.2	785.4
Նոյեմբերյան	2	0.75	318.8	1301.9	810.3	37	17.79	45.3	3509.5	489.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. փետրվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Մրավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Մրավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						27	25647.0	113.2	3612.0	2203.7
Ապարան						4	5490.0	113.2	632.1	184.2
Թալին						1	2560.0	45.3	361.2	87.5
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	11	10800.0	427.7	528.0	466.2	10	11976.0	135.8	2709.0	851.4
Մասիս	21	16870.0	634.0	1553.3	840.3	40	37404.0	135.8	9030.0	1071.2
Վեդի	5	5190.0	408.8	414.8	410.3	15	14880.0	113.2	993.3	622.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						16	18457.8	135.8	2257.5	1010.5
Բաղրամյան						3	3700.0	81.5	270.9	124.3
Վաղարշապատ	2	1440.0	294.0	294.0	294.0	32	28010.0	135.8	4515.0	1375.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	54.0	1295.3	1296.3	1296.3	1	420.0	135.8	903.0	337.5
Ճամբարակ						2	2040.0	45.3	135.5	93.2
Մարտունի	1	1200.0	66.7	66.7	66.7	8	10379.0	90.6	451.5	212.4
Սևան	1	400.0	410.1	410.1	410.1	2	1335.0	90.6	903.0	134.7
Վարդենիս						2	3450.0	45.3	225.8	98.1
Լոռու մարզ										
Ալավերդի						2	2410.0	67.9	270.9	117.5
Գուգարք								67.9	2347.8	516.6
Սպիտակ	1	300.0	528.0	528.0	528.0	2	1980.0	63.4	451.5	115.2
Ստեփանավան						3	4610.0	45.3	270.9	95.1
Տաշիր						1	750.0	45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Արովյան	22	21048.0	2149.4	2420.0	2337.6	59	54495.0	135.8	6772.5	1648.2
Եղվարդ						41	38480.0	135.8	6772.5	1788.3
Հրազդան						8	7100.0	135.8	9030.0	1156.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	20	5782.0	473.7	17467.1	36204.0	3	2480.0	113.2	1535.1	312.5
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						1	1990.0	67.9	180.6	94.2
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	11	5500.0	28.8	280.0	152.7			67.9	925.6	148.5
Սյունիքի մարզ										
Գորիս								67.9	541.8	222.8
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի								67.9	406.4	108.8
Միսիան								67.9	406.4	130.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	1600.0	687.5	1150.0	803.8	4	5000.0	67.9	1128.8	258.5
Վայք								77.0	632.1	110.2
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	23	16301.0	1430.0	2200.0	1564.3	5	4519.0	67.9	1354.5	371.1
Նոյեմբերյան						2	4490.0	45.3	632.1	120.4

2007թ. փետրվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 8 գործարքներ 2.31 հա մակերեսով, ընդ որում 4՝ Գեղարքունիքի /0.20 հա/, 2-ը՝ Լոռվա /0.17 հա/ և 1-ական՝ Արարատի /0.10 հա/ և Շիրակի /1.84 հա/ մարզերում:

2007թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 712 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.3%: Ընդ որում, վարձակալության գործարքների 52.9% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. փետրվարին 2007թ. հունվարի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 3.7%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ աճել՝ 37.2%-ով:

2007թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 107 բնակարանների, 34 անհատական բնակելի տների, 276 հասարակական, 35 արտադրական նշանակության օբյեկտների, 256 միավոր /1645.00 հա/ հողերի և 4 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող 14 միավոր /0.62 հա/ հողերի նկատմամբ գրանցված վարձակալության գործարքների, այդ թվում 12 միավոր /0.03 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. հունվարի համեմատ աճել է 7.7%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ նվազել՝ 46.2%-ով:

2007թ. փետրվարին հանրապետությունում վարձակալված 1645.00 հա հողերից 0.62 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1644.38 հա հողերի 0.40 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 4.25 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 775.33 հա, որից 774.92 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 699.10 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. փետրվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	15	23.64
Արարատ	2	70.00	9	28.91
Արմավիր	0	0.00	4	19.78
Գեղարքունիք	15	442.80	10	20.16
Լոռի	0	0.00	78	774.92
Կոտայք	0	0.00	7	10.59
Շիրակ	0	0.00	5	8.76
Սյունիք	4	186.30	3	29.00
Վայոց Ձոր	0	0.00	4	2.89
Տավուշ	0	0.00	6	2.17
Ընդամենը	21	699.1	141	920.82

2007թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1423 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.7%: Գրավադրման գործարքներից ծագող

իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. հունվարի համեմատ աճել է 71.7%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ՝ 72.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.5%/, առանձնատների /24.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.0%/ և հողերի /9.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 574 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. հունվարի համեմատ աճել է 64.9%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ՝ 39.0%-ով:

2007թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 162.17 հա հողեր, որից 0.46 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 97.6% կամ 158.25 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 60.99 հա, որից 60.80 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 5 և 1 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. հունվարի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 50.0%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ նվազել՝ 70.0%-ով: 2007թ. փետրվարին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են Սյունիքում՝ 50.0%, Արարատի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում՝ 16.7-ական %:

2007թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1367 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. հունվարի համեմատ նվազել է 15.8%-ով, իսկ 2006թ. փետրվարի համեմատ՝ 8.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.3%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն